

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՇՄՆ-Ն-20/01

ք.Երևան

« 24 » « 07 » 2020թ.

Շրջակա միջավայր նախարարությունը, որը հանդես է գալիս ՀՀ կառավարության անունից, ի դեմս գլխավոր քարտուղարի Ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է շրջակա միջավայր նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Նվիրաբերող»), մի կողմից, «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը, ի դեմս մասնաճյուղի տնօրեն Ն.Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Նվիրաբերություն ստացող»), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշումը, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Նվիրաբերողը Նվիրաբերություն ստացողին է հատկացնում **7 000 000 (յոթը միլիոն) ՀՀ դրամ**՝ Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղին գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների վճարման ծախսերի ֆինանսավորման համար:

2. Նվիրաբերության գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Պայմանագրով տրամադրված միջոցները պետք է ծախսվեն Պայմանագրի 1.1 կետում նշված ծախսերի կատարման վրա:

2.2. Դրամական միջոցների փոխանցումը Նվիրաբերություն ստացողի հաշվին իրականացվում է Պայմանագիրն ստորագրելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Պայմանագրի ժամկետը

3.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և դադարում է պատշաճ կատարմամբ:

4. Կողմերի իրավունքները և պարտականությունները

4.1. **Նվիրաբերողն իրավունք ունի՝**

4.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Նվիրաբերություն ստացողի կողմից կատարված աշխատանքները Պայմանագրի 1.1 կետում նշված ծախսերի վճարման հետ՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

4.1.2. եթե Նվիրաբերություն ստացողը նվիրաբերած ֆինանսական միջոցները օգտագործել է Նվիրաբերողի սահմանած նշանակությանն անհամապատասխան, կամ այդ նշանակությունը փոփոխվել է Պայմանագրի 4.3.2 կետով նախատեսված կանոնների խախտմամբ, ապա Նվիրաբերողը կամ նրա իրավահաջորդն իրավունք ունեն պահանջել նվիրաբերության վերացում,

4.2. **Նվիրաբերողը պարտավոր է՝**

4.2.1. Նվիրաբերություն ստացողին վճարել Պայմանագրի 1.1 կետում նշված գումարը՝ նույն կետով սահմանված նպատակով կատարվող ծախսերի վճարման համար,

4.3. **Նվիրաբերություն ստացողն իրավունք ունի՝**

4.3.1. պահանջել Նվիրաբերողից վճարելու Պայմանագրի 1.1 կետում նշված գումարը՝ 2.2 կետով սահմանված ժամկետներում,

4.3.2. Պայմանագրի 1.1 կետում նշված գումարը, Նվիրաբերողի համաձայնությամբ, օգտագործել նպատակով, եթե իրադրության փոփոխման հետևանքով նվիրաբերված ֆինանսական միջոցները օգտագործումը Նվիրաբերողի սահմանած նպատակին համապատասխան դառնում է անհնար, կամ Նվիրաբերողի լուծարման դեպքում՝ դատարանի վճռով,

4.4. **Նվիրաբերություն ստացողը պարտավոր է՝**

4.4.1. Իրականացնել նախատեսված ծախսերի վճարումները պատշաճ կարգով՝ ղեկավարվելով գործառնություններով և Պայմանագրի պայմաններով,

4.4.2. Նվիրաբերողին ներկայացնել վճարումների ընթացքի մասին տեղեկատվություն,

4.4.3. հաշվապահական փաստաթղթերը վարել գործող օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխան՝ ապահովելով նվիրաբերված ֆինանսական միջոցների օգտագործման բոլոր գործառնությունների առանձնացված հաշվարկ,

4.4.4. ապահովել Պայմանագրի 1.1 կետում նշված ծախսերին վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Նվիրաբերողի ներկայացուցչի հնարավորությունը,



4.4.5. Պայմանագրի 1.1 կետում նշված ծախսերի կատարման ավարտից հետո, 15 օրվա ընթացքում, Նվիրաբերողին ներկայացնել կատարման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով կատարված ծախսերի նկարագիրը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

6.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Պայմանագրի փոփոխման և լուծման կարգը

- 7.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր՝ համաձայնագիր կնքելու միջոցով, ինչը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:
- 7.2. Նվիրաբերություն ստացողն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրով նախատեսված նվիրաբերությունից: Այդ դեպքում պայմանագիրը համարվում է լուծված:
- 7.3. Նվիրաբերողը կարող է ցանկացած ժամանակ ամբողջությամբ կամ մասամբ լուծել կամ փոփոխել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով Նվիրաբերություն ստացողին:

8. Այլ պայմաններ

8.1. Պայմանագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՆՎԻՐԱԲԵՐՈՂ

Շրջակա միջավայր նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ գործառնական վարչություն
900011006278
02507198

Շրջակա միջավայր նախարարության
տնօրենի քարտուղարի ժ/պ

Վ.Զիլավյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ

«Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ

ք.Երևան, Այգեստան 7/2
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570011701230100
ՀՎՀՀ 01551446
Մասնաճյուղի տնօրեն

Ն. Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ.

